

կը մղուէին զէպի պատերազմ՝ իրենց ստրուկ եղբայրներու տառապանքին վերջ դնելու համար: Թիւրք կառավարութիւնը պահանջ դրեց այդ երկու երկիրներուն՝ զաղբեցնել իրենց զինուորումը: Ի պատասխան, Սերբիոյ Միւլան թագաւորը պահանջեց, որ «թիւրքական բանակը եւ բոլոր վայրերն ի հորդաները հեռանան սերբիական սահմաններէն»:

Եւ 1876-ի յունիս 30-ին Սերբիա ու Մօնտենէգրօ պատերազմ յայտարարեցին ու անցան սահմանը: Սեւ Լեոնցիք տարան շարք մը յայթուէիւններ: Սերբերը թուով 80,000, կը կուռէին 200,000-նոց թիւրք բանակի դէմ, որու գլուխն էր թիւրքական լաւագոյն զօրավարը, Օսման փաշա: Սերբիոյ պարտութիւնը անխուսափելի էր: Շուտով թիւրք զօրքը ներխուժեց անոր հողերը... Եւ Միլան թագաւորը, սարսափահար, զիմեց Եւրոպային, անոր օգնութիւնն աղերսելով:

Այդ կոչը յուզեց հանրային կարծիքը: Անգամ Գիլրայէլի կառավարութիւնը պահ մը ընդհատեց իր թիւրքամոլ ընթացքը: Սերբիոյ թագաւորն աղիողորմ կոչեցէն աւելի ազդուէին Բուլղարիոյ ջարդերը: Երբ անոնց լուրը հասաւ Լոնտոն, ազատամիտ կուսակցութիւնը խլրաց, Գլաուստոն այդ կուսակցութեան պարագլուխը զգայացունց ճառ մը արտասանեց «բուլղարական սարսափներու» մասին եւ ողջ Անգլիոյ հանրային կարծիքը ցատուժի ճիչ մը արձակեց թիւրքական բարբարոսութեան դէմ:

«Դէյլի Նիւուզ», Գլաուստոնի օրգանը, կը գրէր այդ օրերուն.

— «Աւելի լաւ է, որ Ռուսաստանը դրաւէ Բօսնիա-Հերցեգ եւ Բուլղարիա, քան թէ այդ նահանգները մնան թիւրքական լքուածութեան տակ»...

Գիլրայէլի հարկադրուած էր զիջում մը ընել հանրային տրամադրութեան եւ որոշեց պահանջել թիւրքիայէն ինքնօրէնութիւն մը (autonomie) ապստամբ երկիրներուն համար:

Ձինազազար եղաւ:

Այնուամենայնիւ, զիւանագիտութիւնը խօսքէն գործի չէր անցներ եւ ոչՓօրմներու գործը կը ձգձգուէր: Թիւրքերը, համոզուած,

որ քրիստոնեայ պետութիւններու այդ տխուր «համերգէն» վնաս մը չկայ իրենց, շարուակեցին ետվաչ-ետվաչի քաղաքականութիւնը: Պատերազմական կուսակցութիւնը դարձաւ աւելի զրգռիչ ու ամբարօտան, երբ պալատական նոր դաւադրութեամբ Մուրադ Ե. վար գրուեցաւ եւ զահակալեց Աբդուլ Համիդ...:

Կարճատեւ զինազազարէ յետոյ, թիւրքերը վերսկսեցին պատերազմը Սերբիոյ դէմ, նոր ջարդ տուին սերբերուն, ջարդեցին անգամ այն բանակը, որու առաջնորդն էր ցարէն զըրկըւած ռուս զօրավար Չեքնիաեւ: Սերբ զօրքէն ստուեր մը միայն մնաց եւ թիւրքերը անարգել զիմեցին զէպի Բելգրադ:

Ահա այն ատեն էր, որ Ռուսաստանը վերջապէս շարժուեցաւ: Ռոշեց զատուիլ եւրօպական համերգէն եւ մենմենակ ծառանակ թիւրքին դէմ:

Իզնատիել, Պոլսոյ դեսպանը, վերջնագիր մը ուղղեց սուլթանին.

— «Եթէ չըզդրեցնէք պատերազմական գործողութիւնները Սերբիոյ դէմ, Ռուսաստանը պիտի խղէ իր զիւանագիտական յարաբերութիւնները թիւրքիոյ հետ»...

Յարը երկար ատեն կը վարանէր. վստայի նախ՝ իր զինուորական պատրաստութիւնները Բեստարաբիայի մէջ չէին աւարտած, ապա կը վախնար Անգլիայէն եւ Աւստրիայէն, որոնք կրնային ընդհարուծի ատեն թիւրքի կողմն անցնիլ:

Բայց ցարական այս վերջնագրին հանդէպ թիւրքիան, վերջապէս, մենակ զգաց զինքը եւ զիջեց:

Ան վերստին զինազազար կնքեց իր հակառակորդ Սերբիոյ հետ: Այն ժամանակ ցարը նորէն հրաւիրեց պետութիւնները խորհրդաժողովի, որը պիտի տնօրինէր Բօսնիա-Հերցեգի ու Բուլղարիոյ վիճակը: Եւ ռուս կառավարութիւնը Անգլիոյ դեսպանի միջոցով հասկըցուց Լոնտոնի զահլիճին, որ «եթէ Եւրոպան կարող է անվերջ ապստակներ կրել թիւրքիայէն, Ռուսաստանը չի կարող. այդ չի թոյլ տար ոչ իր պատիւը, ոչ իր շահը... Եթէ Եւրոպան տրամադիր չէ քալելու, Ռուսիան պիտի քալէ մեն-մենակ»:

Այլեւս ոչինչ չէր կանգնեցներ Գօրչակովին